ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» դեկտեմբերի 2004 թ. N 153-Ա

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 29-ի թիվ 635-Ն որոշման 1-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ (կցվում է):

2. «ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ 15 օրվա ընթացքում կազմակերպության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Ա. Վարդանյան

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
2004 թվականի
N 153-Ա/1 հրամանով

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Գյումրու
տարածքային բաժնում
Տպագրված է ընդամենը 5
օրինակից 1
օրինակ N--------
«10» 06 2003թ
թվական 292100197 3
գրանցման վկայականի թիվ 06 03 98
Բաժնի պետ
24.01.2005թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ - ԻՆՏԵՐՆԱՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու տուն-ինտերնատ» (այսուհետ՝ Տուն-ինտերնատ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հայաստանի Հանրապետության Կառավարության 27.05.2004 թվականի N 635-Ն որոշման համաձայն Շիրակի մարզպետարանի «Գյումրու տուն-ինտերնատի» պետական ոչ առևտրային կազմակերպության
կառավարման լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ Շիրակի մարպետարանի «Գյումրու տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (վկայական N03Ա 060828. գրանցման համարը 05503015) իրավահաջորդն է:

3. Տուն-ինտերնատի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

4. Տուն-ինտերնատը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

5. Տուն-ինտերնատի գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

6. Տուն-ինտերնատը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Տուն-ինտերնատը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Տուն-ինտերնատը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած Տուն-ինտերնատի պարտավորությունների, իսկ՝ Տուն-ինտերնատը իր հիմնադրի պարտավորությունների համար:

9. Տուն-ինտերնատը ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

10. Տուն-ինտերնատը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

11. «Գյումրու տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավաբանական հասցեն է.
ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 18

հեռախոսներ՝ 4-19-10, 4-08-21

12. Տուն-ինտերնատի անվանումն է՝-

հայերեն – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (կրճատ ԳՏԻ)

ռուսերեն – Государственная некоммерческая организация «Гюмрийский дом-интернат» Минестерство труда и социальных вопросов РА (կրճատ՝ ГДИ)

անգլերեն –"Giumry Boarding-house" State Non-commercial Organization of the Ministry of Labor and Social Issues of the RA.

II. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Կազմակերպության հիմնական նպատակը միայնակ, սոցիալապես անապահով տարեց անձանց և հաշմանդամների շուրջօրյա խնամքի ապահովումն է, կյանքի բարեկեցիկ, ընտանեկանին առավել մոտ պայմանների ստեղծումը:

14. Տուն-ինտերնատի գործունեության առարկան է՝ տուն-ինտերնատում խնամվող տարեցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց սոցիալ-հոգեբանական և բժշկական օգնության կազմակերպումը, խնամքի իրականացումը, սննդով, հագուստով և կենցաղային այլ անհրաժեշտ իրերով ապահովումը,

15. Տուն-ինտերնատը իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա/ կազմակերպում է տարեցների ընդունելությունը,

բ/ աջակցում է նրանց հարմարվելու նոր սոցիալական միջավայրին,

գ/ կազմակերպում է տարեցների կենցաղային սպասարկումը, ազատ ժամանցը, ապահովում է նրանց անկողնային պարագաներով, հագուստով, կոշկեղենով,

դ/ ապահովում է համապատասխան սննդով, ելնելով խնամվողի առողջական վիճակից,

ե/ կազմակերպում է դիսպանսերիզացումը, բուժումը, մասնագետ բժիշկների օգնություն, անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացում,

զ/ անցկացնում է սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ,

է/ պահպանում է խնամվողների անձնական գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

ը/ կազմակերպում է խնամվող մահացածների հուղարկավորությունը:

16. Կազմակերպության գործունեության հիմնական խնդիրներից մեկը խնամվողների սոցիալ-աշխատանքային վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացումն է: Այդ նպատակով կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկման և կենցաղային սպասարկման ծառայությունների մատուցում, խնամվողների և նրանց աշխատանքի կազմակերպիչների ուժերով՝ հացի արտադրություն, գորգերի և գորգեղենի արտադրություն, փայտե արտադրատեսակների արտադրություն:

17. Տուն-ինտերնատը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

III. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Տուն-ինտերնատի ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը:

19. Լիազորված պետական մարմինը՝

ա) ապահովում է Տուն-ինտերնատի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

բ) հաստատում է Տուն-ինտերնատի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

գ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Տուն-ինտերնատի տնօրենի ներկայացմամբ հաստատում է Տուն-ինտերնատի կառուցվածքը և աշխատողների թիվը և աշխատակարգը,
դ) իրականացնում է Տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ վերահսկողություն,
ե) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Տուն-ինտերնատի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
զ) լսում է Տուն-ինտերնատի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները, հաստատում Տուն-ինտերնատի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
է) վերահսկողություն է իրականացնում Տուն-ինտերնատի ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ,
ը) վերահսկողություն է իրականացնում Տուն-ինտերնատի սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս Տուն-ինտերնատի գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնման համար,
թ) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Տուն-ինտերնատի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը:

21. Տուն-ինտերնատի տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը իրականացվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն:

Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

22. Տնօրենը կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

23. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

24. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Տուն-ինտերնատին և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

25. Տնօրենը՝
ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Տուն-ինտերնատի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում պայմանագրեր,
բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Տուն-ինտերնատի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Տուն-ինտերնատի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Տուն-ինտերնատի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
է) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում Տուն-ինտերնատի կառուցվածքը, աշխատողների թիվը, Տուն-ինտերնատի կանոնադրությունը, ներքին կարգապահական և այլ կանոնները,
ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ,
ժ) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում Տուն-ինտերնատի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,
ժա) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը,
ժբ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

26. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

27. Տնօրենի բացակայության ժամանակ, նրա հրամանով տնօրենի լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը:

28. Տուն-ինտերնատի աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, Տուն-ինտերնատի աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

IV. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

29. Տուն-ինտերնատի սեփականությունը ձևավորվում է տուն-ինտերնատի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Տուն-ինտերնատի գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Տուն-ինտերնատի գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

30. Տուն-ինտերնատը իրավունք ունի օրենքների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն ու ֆինանսական միջոցները:

31. Տուն-ինտերնատին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Տուն-ինտերնատի լուծարումից հետո մնացած գույքի նկատմամբ:

32. Տուն-ինտերնատի սեփականության պահպանման հոգսը կրում է Տուն-ինտերնատը:

33. Տուն-ինտերնատի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

V. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

34. Հիմնադրի որոշմամբ Տուն-ինտերնատին անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

35. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Տուն-ինտերնատին ամրացված գույքը:

36. Տուն-ինտերնատը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Տուն-ինտերնատը իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Տուն-ինտերնատի ստացած եկամուտները Տուն-ինտերնատի սեփականությունն են:

37. Հիմնադրի կողմից Տուն-ինտերնատին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Տուն-ինտերնատի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

VI. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

38. Տուն-ինտերնատը իր հիմնական գործունեությանը զուգընթաց ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Տուն-ինտերնատը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

39. Տուն-ինտերնատը գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:

40. Տուն-ինտերնատը իր կարիքների համար գնումները կատարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Տուն-ինտերնատի համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում Տուն-ինտերնատի կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Տուն-ինտերնատի կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

41. Տուն-ինտերնատը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով:

VII. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

42. Տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

43. Տուն-ինտերնատի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը

ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

VIII. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ
ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

44. Կազմակերպություն ընդունվում են միայնակ, սոցիալապես անապահով տարեց անձիք և հաշմանդամները՝ համաձայն Առողջապահության նախարարության կողմից հաստատված «Տուն-ինտերնատ ընդունվելու վերաբերյալ բժշկական ցուցումներ և հակացուցումներ» հրահանգների:

Բացառության կարգով կարող են ընդունվել աշխատունակ զավակներ ունեցող առանձին անձիք, ովքեր որոշակի հանգամանքներից ելնելով չեն կարող բնակվել իրենց ընտանիքում:

45. Մարզերի, քաղաքների և գյուղերի սոցիալական ծառայությունները հայտնաբերում են տուն-ինտերնատում բնակվելու կարիք ունեցող անձանց, ձևակերպում համապատասխան փաստաթղթերը տուն-ինտերնատ ընդունվելու համար:

46. Տուն-ինտերնատ ընդունվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրերով, որը տրվում է միայնակ, սոցիալապես անապահով տարեց անձանց և հաշմանդամների դիմումի, բժշկական քարտի և սոցիալական ծառայության տարածքային գործակալության տրված տեղեկանքի հիման վրա:

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները և նրանց հավասարեցված անձիք տուն-ինտերնատ ընդունվում են առաջնահերթ կարգով:

Տուն-ինտերնատում ազատ տեղերի առկայության դեպքում միայնակ, սոցիալապես անապահով անձիք և հաշմանդամները, անհրաժեշտությունից ելնելով, կարող են ընդունվել ժամանակավոր բնակության՝ 2-6 ամիս ժամանակով, ընդհանուր հիմունքներով:

47. Տուն-ինտերնատ ընդունվող յուրաքանչյուր խնամվողի համար ընդունվելիս պահանջվում և կազմվում է՝

ա) անձնական գործ, որում պահվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգիրը, տվյալ անձի դիմումը, բժշկական քարտը, սոցիալական տեղեկանքը, անձնագիրը, կենսաթոշակառուի կամ հաշմանդամության վկայականը, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի տեղեկանքը: Անձնական գործը պահվում է տուն-ինտերնատի գրասենյակում,

բ) խնամվողի հիվանդության պատմությունը, որում պահվում են բոլոր բժշկական

փաստաթղթերը՝ կազմված տուն-ինտերնատում եղած ժամանակ,

գ) այն խնամվողների նկատմամբ, որոնք ունեն խնամակալության և հոգաբարձության կարիք, տուն-ինտերնատի տնօրենը միջոցներ է ձեռնարկում խնամակալի և հոգաբարձուի պարտականություններ իրականացնելու համար:

48. Տուն-ինտերնատում խնամվողի կենսաթոշակը վճարվում է՝ համաձայն գործող օրենսդրության:

49. Տուն-ինտերնատում խնամվողը, տնօրենի թույլտվությամբ, կարող է օգտվել իրեն անհրաժեշտ իրերից:

50. Տուն-ինտերնատ ընդունվողը (խնամվողը) իր անձնական գույքը՝ դրամական միջոցները, թանկարժեք իրերը և արժեթղթերը, իր ցանկությամբ, կարող է հանձնել տնօրենին, որը խնամվողի մահից հետո, ենթակա է ժառանգման:

51. Տուն-ինտերնատի խնամվողը, բժշկական եզրակացության համաձայն, կարող է զբաղվել աշխատանքային գործունեությամբ (ձեռնարկատիրական գործունեության ասպարեզում, արհեստանոցներում, սանիտարական, տարածքի կանաչապատման, բարեկարգման աշխատանքներում և այլուր):

Աշխատանքի վարձատրության 50 տոկոսը տրվում է խնամվողին, իսկ մյուս 50 տոկոսը ծախսվում է տուն-ինտերնատի կարիքների համար:

52. Տուն-ինտերնատի խնամվողը կարող է կատարել կրտսեր բուժաշխատողի աշխատանք, եթե տվյալ աշխատանքը նրան հակացուցված չէ:

53. Տուն-ինտերնատից նեյրո-հոգեբուժական տուն-ինտերնատ կամ հոգեբանական կենտրոն տեղափոխվելն իրականացվում է բժշկական եզրակացության հիման վրա:

54. Տուն-ինտերնատից խնամվողի բացակայությունը թույլատրվում է տնօրենի կողմից, ոչ ավելի, քան մեկ ամիս ժամանակով: Խնամվողի ժամանակավոր մեկնման հետ կապված ծախսերը տուն-ինտերնատը չի փոխհատուցում:

55. Տուն-ինտերնատից խնամվողի ազատումը թույլատրում է տնօրենը, եթե խնամվողն ունի բավարար բնակտարածություն, ապրելու համար միջոցներ և բարեկամներ, հարազատներ, որոնք անհրաժեշտության դեպքում նրա մասին հոգ կտանեն: Խնամվողը տուն-ինտերնատից ազատվում է անձնական դիմումի համաձայն կամ եթե պարբերաբար խախտել է տուն-ինտերնատի ներքին կարգը:

56. Տուն-ինտերնատից ազատվելիս խնամվողին տրվում են իր անձնական իրերը, որոնք ուներ Տուն-ինտերնատ ընդունվելիս:

IX. ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

57. Տուն-ինտերնատը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան կամ դատական կարգով:

58. Տուն-ինտերնատի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

59. Տուն-ինտերնատը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

60. Տուն-ինտերնատի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: